ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 2025 թվականի N 1308 - Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 2060-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, «ՄԵՐԻԴԻԱՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետին և 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցանկի 44-րդ տողին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշման NN 3, 4, 5, 9, 9.1 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների:

2. Հավանություն տալ 2026 թվականին Հայաստանի Հանրապետությունում կայանալիք Միավորված ազգերի կազմակերպության Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի (այսուհետ՝ COP 17) անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) և «ՄԵՐԻԴԻԱՆ ՀՈԼԴԻՆԳ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրին՝ համաձայն N 7 հավելվածի (այսուհետ՝ պայմանագիր):

3. Կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում ձևավորել գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանում (մասնագիտական խումբ)՝ կոմիտեի, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցիչների ընդգրկմամբ.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո 5-օրյա ժամկետում ընկերության հետ կնքել պայմանագիր:

4. Սահմանել, որ՝

1) պայմանագրով նախատեսված սահմանափակումները ենթակա են պետական գրանցման.

2) ընկերության կողմից մատուցվող ծառայությունների գինը կազմում է 5,775.0 միլիոն դրամ, որը տրամադրվում է միանվագ՝ կանխավճարի տեսքով, որից 3,000.0 միլիոն դրամը կհանդիսանա 2025 թվականի սեպտեմբերից մինչև 2026

թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար ընկերության կողմից մատուցված ծառայությունների վճար, իսկ 2,775.0 միլիոն դրամը՝ հետագա 6 տարիների ընթացքում 200 օր Հայաստանի Հանրապետության կառավարության հայտերի հիման վրա՝ որպես միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման կանխավճար: Ընդ որում, ընկերության կողմից մատուցվող ծառայությունների գինը՝ 5,775.0 միլիոն դրամն ընկերությանը փոխանցվելու է պայմանագրի կատարումն ապահովող համապատասխան բանկային երաշխիք ներկայացնելու օրվանից 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում.

3) պայմանագրի արդյունքներն ընդունվում են մասնագիտական խմբի կողմից՝ հիմք ընդունելով ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի նոյեմբերի 26-ի N 1069-Ա որոշմամբ ստեղծված Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի կազմակերպման և անցկացման կոմիտեին տրամադրված, վերջինիս կողմից հաստատված և Միավորված ազգերի կազմակերպության լիազորված ներկայացուցչի կողմից ներկայացված եզրակացությունը՝ տարածքի նախապատրաստման և COP 17-ի համար ներկայացվող ստանդարտներին համապատասխանության վերաբերյալ:

5. Թույլատրել կոմիտեին սույն որոշման N 7 հավելվածով սահմանված ծառայությունների ձեռքբերումն իրականացնել մեկ անձից գնման ձևով:

6. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5-օրյա ժամկետում կոմիտեին տրամադրել պայմանագրով նախատեսված՝ ֆինանսական հսկողություն իրականացնող անձի տվյալները:

7. Առաջարկել Երևան համայնքին աջակցել սույն ծրագրի շրջանակներում տարածքի նախապատրաստման համար անհրաժեշտ համապատասխան թույլտվություններ տրամադրելու գործընթացներին:

8. Պետական կառավարման համակարգի մարմիններին աջակցել սույն ծրագրի շրջանակներում տարածքի նախապատրաստման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացմանը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ